











Հակահրդեհային ահազանգման համակարգի սարքավորումների մասնագիր				
Հ/Հ	Անվանումը	Մակնիշը	Չափի միավորը	Քանակը
1	Ընդունող հսկող սարք /ղեկ. ստեղնաշար	Nx 8 / Nx 148	լրկ.	1
2	Հրդեհի ծխի տվիչ սարք	ECO 1003	հատ	49
3	Հրդեհի ձեռքի տվիչ սարք	BS-BF GBCP911	հատ	4
4	Լուսաձայնային ազդարարիչ	AD - 103	հատ	4
5	Հաղորդալար 4*0,22 մմ ²		մ	230
8	Հաղորդալար 12*0,22 մմ ²		մ	30
9	Միացման տուփ 85x85x40		հատ	2
10	Մարտկոց 12Վ/7Ա		հատ	1
11	Սակառ (короб) 25x16		մ	25
12	Ամրացման պարագաներ (дюпел/պурып)		հատ	80
13	Ամրացման պարագաներ (скоба N1)		հատ	700
Պայմանական Նշաններ				
	Ընդունող հսկող սարք			
	Հրդեհի ծխի տվիչ սարք			
	Հրդեհի ձեռքի տվիչ սարք			
	Լուսաձայնային ազդարարիչ			
	Միացման տուփ 85x85x40			
	Տեսախցիկ			
	Բարձրախոս էլ.գանգի	 Гр20		
	Բարձրախոս ակուստիկ	 Гр50		
	Բարձրախոս ակուստիկ ձակատային	 Гр100		
	Միջհարկային անցում			

Բացատրագիր

Նախագծի «Հակահրդեհային համակարգ» մասն իրականացվում է ճարտարա-պետա-շինարարական գծագրերի հիման վրա:

Նախատեսված է հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգ, համաձայն գործող նորմերի ու կանոնների (ՀՀՇՆ II-8.04.01-97, ՀՀՇՆ II-8.04.02-05): Նախագծման ընթացքում հաշվի են առնվել նաև ՌԴ ՆՊՔ 88-01-«Հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման սարքավորանք. Նախագծման նորմաներ և կանոններ» փաստաթղթի պահանջները:

Համակարգը նախատեսված է հսկվող տարածքներում հրդեհի հայտնաբերման, տեղում տազնապի ազդարարման և համապատասխան ծառայություններին տեղեկացման համար:

Որպես ընդունիչ-հսկիչ սարք նախատեսված է Nx 8, տիպի սարքը Nx148 տիպի ստեղնաշարով, որն ապահովում է հրդեհային զոնաների շուրջօրյա հսկողությունը: Այն սարքավորված է ID տազնապային ելքով, որը հնարավորություն կտա 911 ծառայությանը տազնապի ակնթարթային տեղեկացմանը, ինչպես նաև 256 քայլի հիշողությամբ, ուր գրանցվում են տազնապները, հոսանքագրվումները և այլն: Սարքը տեղակայվում է 1-ին հակում, պահակի սենյակում՝ մուտքի մոտ: Սարքի վրա օգտագործված է 6 ճառագայթ: Դա հնարավորություն է ընծեռնում հետագայում սարքին միացնել նաև առանձին սենյակների և հարկաբաժինների պահպանության բնագծեր: Ճառագայթների վերջում տեղակայվում են վերջնական էլեմենտները, որոնք մտնում են սարքերի լրակազմի մեջ:

Որպես հրդեհի ազդասարքեր օգտագործվում են System Sensor՝ ֆիրմայի ինքնաշխատ օպտիկական ծխային ECO-1003 տվիչ սարքեր իրենց B412R տիպի ռելեային ելքեր ունեցող հիմքերով: Միևնույն ճառագայթի մեջ գտնվող ազդասարքերի հիմքերի ռելեների նորմալ փակ կոնտակները հաջորդաբար միացվում են այնպես, որ ազդասարքի հանելը հիմքից կամ ազդասարքի թողարկումը խզի շեյֆի ամբողջականությունը, որն էլ ընդունիչ-հսկիչ սարքի կողմից կընդունվի որպես «ՏԱԳՆԱՊ»: Ազդասարքերի տեղակայումը պետք է իրականացվի համաձայն գործող նորմերի, հաշվի առնելով առաստաղի կառուցվածքային առանձնայնատյկություններն ու լուսատու սարքերի փաստացի տեղաբաշխումը:


Ազդանշանման ցանցն իրականացվում է բաց եղանակով, ուղղաձիգ հատվածները՝ սակառների (короб) մեջ, 4x0.22 և 12x0.22 տիպի մալուխներով: Համակարգի էլ.սնուցումն իրականացվում է 220Վ լարման բաշխիչ վահանակից առանձին ավտոմատ անջատիչից 2x0.35 հաղորդալարով: Լարային ցանցը պատկերված է պայմանականորեն և ենթակա է ճշգրտման տեղում՝ աշխատանքների իրականացումից առաջ:

Հրդեհի ազդարարման դեպքում շենքում գտնվող մարդկանց իրազեկման նպատակով յուրաքանչյուր հարկում տեղակայված են լուսաձայնային ազդարարիչներ, զիշերային ժամերին «ՏԱԳՆԱՊ» ազդանշանը առավել ընկալելի դարձնելու համար: Դրանց միացումը համակարգին իրականացվում է 4x0.22 հաղորդալարով:

«ՏԱԳՆԱՊի» դեպքերում աշխատակիցների կազմակերպված տարիանումն ապահովելու նպատակով տնօրինության կողմից պետք է կազմվեն տարիանման սխեմաներ և նշանակվեն պատասխանատուներ:

Տեսահսկման ենթահամակարգում նախատեսված են մոնոքրոմ, անշարժ, CCD 500 TVL որակի մինիատյուր ներկառուցված ինֆրակարմիր լուսավորությամբ, թվով 8 արտաքին տեսախցիկներ, որոնց ազդանշանները տեսագրվում են 8 մուտքանի թվային տեսագրիչի 1 TB կոշտ սկավառակի վրա: Ցանկալի է ակտիվացնել “Շարժման դետեկտոր” ֆունկցիան, որով կիրականացվի պահպանությունը և կբարձրանա կոշտ սկավառակի օգտագործման էֆեկտիվությունը: Նախատեսված է 21” մոնիտոր (հեռուստացույց), որով իրականացվելու է տեսագրության վերադիտում կամ ուղակի «կենդանի» դիտարկում: Տեսագրիչն ու մոնիտորը նախատեսվում է տեղակայել պահակի սենյակում: Համակարգի էլ.սնուցումն իրականացվում է 220Վ լարման բաշխիչ վահանակից առանձին ավտոմատ անջատիչից, իսկ հոսանքագրվումների դեպքերում՝ СКАТ-1500 տիպի 12 վոլտ լարմամաբ անկախ սնուցման սարքից: Համակարգի ընդունիչ-հսկիչ սարքերն ու անկախ սնուցման սարքերը պետք է հողակցվեն համաձայն ԷՍԿ-ի, ՍՆԻՊ 3.05.06-ի և սարքերի տեխնիկական փաստաթղթերի պահանջների:

Համակարգի սարքավորման ընթացքում թույլատրվում է այլ համանման սարքերի և նյութերի կիրառումը, եթե դրանք չեն վատթարացնում ընդհանուր համակարգի տեխնիկական և սպառողական հատկությունները:

 «ՏԱՎՐՈՍ» ՍՊԸ	ՆԳՑ	Է.ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ Գ. ՔՈՒԶԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ			
	ՃԱՐՏԱՐԱԳԵՏ	Ա. ՓԱՅԼԵՎԱՆՅԱՆ					
				ՀԱԿԱՅՐԴԵՅԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	Փուլ	Թերթ	Թերթեր
					ԱՆ	Հ/Հ-1	3
ՊԱՏՎՈՐԱՏՈՒ ՀՀ ԶԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» Պ/Հ				ԲԱՑԱՏՐԱԳԻՐ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ			